ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 41

«25» սեպտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի նիստի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (տարածքների), այդ թվում՝ միասնական ընդունարանների տեղակայման վայրերին և պայմաններին հավանություն տալու մասին » N 29 արձանագրային որոշումը և Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի N ԱԱ/ԱՄ-2/5829-14 գրությունը՝ Հայաստանում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրման նպատակով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ, տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաք Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում գտնվող , Մարալիկի քաղաքապետարանի թիվ 1 վարչական շենքի 1-ին հարկի ձախակողմյան հատվածի չվերանորոգված տարածքը 231.6 քառակուսի մետր մակերեսով, բացառությամբ N 3, 4, 5, 6 աշխատասենյակների, որոնք օգտագործվելու են քաղաքապետարանի կարիքների համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավար Ա. Գևորգյանին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման անժամկետ պայմանագիր:

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ
Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ
Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
25 սեպտեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 42

«25» սեպտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության արվեստի դպրոցի տնօրենի դիմումը, նկատի ունենալով արվեստի դպրոց հաճախող երեխաների սոցիալական վիճակը և ելնելով մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման շահերից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության արվեստի դպրոց հաճախող 2014 թվականի ծնողական մուծումներից ազատվող երեխաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ
Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ
Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
25 սեպտեմբերի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25 -Ի ԹԻՎ 42 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍԸԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոցիալական վիճակը	
1	Հովհաննիսյան Արմիկ Արթուրի	սոց. անապահով	100 %
2	Գյուլբեկյան Աննա Արեստակի	սոց. անապահով	100 %
3	Գյուլբեկյան Անի Արեստակի	սոց. անապահով	100 %
4	Սուքիասյան Սոնա Սեյրանի	սոց. անապահով	100 %
5	Ասլանյան Մարինե Մանուկի	սոց. անապահով	100 %

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 43-Ն

« 25 » սեպտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 1159.4 թիվը փոխարինել 904.4 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 12100.0 թիվը փոխարինել 12750.0 թվով:

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ
Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ
Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
25 սեպտեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 44-Ն

« 25 » սեպտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 792-Ն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքին 2014 թվականի հուլիսի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը 50.0 հազ. դրամ սահմանելու կապակցությամբ համայնքային բյուջետային հիմնարկներում 1974 թվականի հուլիսի 1-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով համայնքներին նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տրամադրելու համար 2014 թվականի սեպտեմբերի 1-ի N77 սուբվենցիայի հատկացման պայմանագրով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Մարալիկ համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7331 հոդվածի պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տողի << 0 >>թիվը փոխարինել <<759.0>> թվով:
2. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի ծախսային մասի 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<79853.0>> թիվը փոխարինել <<80612.0>> թվով, այդ թվում՝
   1) 01.1.1.51 (ապարատի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<22974200>> թիվը փոխարինել <<23259948>> թվով:
   2) 08.2.1.51 (գրադարանի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<6682000>> թիվը փոխարինել <<6707722>> թվով:

3) 08.2.3.51 (մշակութային երիտասարդական կենտրոնի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<8020000>> թիվը փոխարինել <<8148610>> թվով:

4) 09.1.1.51 (նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<11000000>> թիվը փոխարինել <<11102864>> թվով:

5) 09.5.1.51 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<9087000>> թիվը փոխարինել <<9229890>> թվով:

6) 09.5.1.51 (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<6682000>> թիվը փոխարինել <<6759166>> թվով:

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ք. Մարալիկ
25 սեպտեմբերի 2014 թվական